


Ի դեպ



Ժամանակներ

6

3

ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՍԸ ՆՈԹԵՐԷՆ
Յարուժիւն Քիւրքճեան

17

ՉԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Գէւորգ Մանուկեան

19

ԻՆՉ ՈՐ ԿԸ ԿԱՆԽԷ
Գրիգոր Պլլտեան

25

ՉԳՐԵԼՈՒ ԸՆԹԱՅՔԸ
Մարուշ Երամեան

28

ԻՆՉՈՒ ԳՐԵԼ
Լեոնարդօ Ալիշան
Թարգ՝ Գուրգէն Արզումանեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան
E teb • 2354 Pennerton Dr. • Glendale, • CA 91206
eteb@earthlink.net • www.eteb.com
© 2008 E teb

~ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄԸ ՆՈԹԵՐԷՆ ~

- Կը պատկերացնե՞ս, - կ'ըսէ Հին ընկերդ, - քառասուն տարի, քառասուն տարի կ'ընէ 68ի օրերէն մինչեւ այսօր: Այսինքն աւելի քան մեր այն օրերու հեռաւորութիւնը՝ «Նահանջ»ի, «Փորձ»ի, «Անջրպետ»ի ժամանակէն, 20ականներու աւարտէն...:

Կէս ժամ առաջ գտաք իրար. չէիք հանդիպած՝ տարիներ: Եւ ահա, առաջին ողջագոլերումներէ եւ փոխանակումներէ ետք, այս անդրադարձը՝ իր բերնին:

... Ժամանակի անցքին անդիտակից չէիր լրիւ: Բայց ինչպէ՞ս չէիր անդրադարձած ժամանակամիջոցներու այս մէկ համեմատութեան՝ «Աւելի քան...»: Թերեւս քու յարաբերական առանձնութի՞ւնդ՝ եւրոպական Միջերկրականի արեւելեան ափերուն: Կամ մտասեւեռեալ անուշադրութի՞ւնը՝ իր ըրածի օգտակարութեան համեմատօրէն համոզուած, անով տարուած մարդու: Կամ պարզապէս կենսաձեւ դարձած որոշ եպիկուրեանութի՞ւն...: Նոյնիսկ յաճախակի այցերդ Սփիւռքի հին «մայրաքաղաք»ին՝ ծննդավայր Պէյրութիդ, համայնքիդ, քեզի չէին տուած աւիթ ընկալելու ժամանակի այս թաւալքը...

Բայց այսօր, ահա, այս հանդիպումը՝ փարիզեան ուսանողական օրերու Ֆրանսահայ ընկերօջ հետ: Հիմա դուն ես հիւրը հին բնավայրիդ մէջ, ինք՝ հիւրընկալը, «տեղացին»: Նոյնիսկ եթէ հոս կը գտնուի ժամանակաւոր «տեղացիութեամբ», իբր դասախօս Պէյրութի հայկական համալսարանի հայագիտական բաժինի -

Միաց. Նահանգներու մէջ եւ այլուր տարիներով ապահովելէ եւ արժեւորելէ ետք նոյնպիսի ամպիրոններ...

Այո՛, ժամանակը կը սուրայ: Եւ տասնամեակներու թաւալքին հետ անոր թակարդը բռնուած ապրող-մտածող էակ՝ պահ մը ա՛լ, կամայ-ակամայ, ինքզինքդ կը տեղադրես կացութիւններու փոփոխուող հեռանկարի մը մէջ: Անհատական թէ հաւաքական գոյահոսքի հեռանդկար, որուն գանազան կտրուածքները, ժամանակի այս կամ այն կէտին վրայ, քեզ կը մղեն հանդրուանային հարցադրումներու: Նոյնիսկ եթէ կը խորշիս յաճախակի հանգրուան նշելու պայմանական ծէսէն...

* * *

Կար ու չկար՝ Սփիւռք մը կար - 60ականներու Սփիւռք մը, իր երեք-չորս տասնամեակներու թիզ մը պատմութեամբ: Սփիւռք մը՝ կայուն, պատճենահանուած. Միջին Արեւելքը՝ Միջին Արեւելք, Եւրոպան՝ Եւրոպա, Ամերիկան՝ Ամերիկա - ու այսպէս՝ շարունակաբար:

Իրականութիւնը, ճիշդ է, աւելի բարդ է - ինչպէս միշտ: Գաղթային տեղաշարժ մը միշտ ալ զգացուել էր: Եկած-անցած էր զանգուածային հայրենադարձ՝ յետոյ նոր ելքով Երկրէն (դեռ մանր ալիքներով): Արտագաղթ կը ճանչնար Սփիւռքի Արեւելքը՝ Եզիպտոս, Սուրիա, Լիբանան, Իրան - դէպի Արեւմուտք. ոմանց համար՝ Աւետեաց երկիր, ոմանց՝ մեկնումի անբացատրելի մղում մը «վերջին սահման». դեռ ուրիշներու՝ պարզապէս գիտութեան-ուսումի փարոս...: Բայց ժամանակաշրջանը ինքնին կայուն էր առհասարակ. նուազ հազոր-

դակից էին մոլորակի գօտիները, տեղափոխումները՝ համեմատաբար սակաւ:

* * *

Դուք, մնալուն կամ ժամանակաւոր կեցութեամբ 60ականներուն Միջին Արեւելքէն Արեւմուտք յանգած նորերդ, եկած՝ փնտռելու ո՛չ թէ կասկածելի արժէքներու հանք «Աւետեաց երկիր» մը, այլ ձեզի համար իսկ դեռ ճշդելի ուրիշ բան մը, – կ'ապրէիք ներիմացումը նոր տեսիլքի մը. ձեր մէջ արդէն կ'ուրուագծուէր մերժումը Արեւելք/Արեւմուտք, հայապահպանում/ձուլում մանիքէական երկուութեան: Եւ աւանդական պատկերացումներու այս խախտումը, հայութիւնը մտածել փորձող իրերահաղորդ միջին-արեւելքցի երիտասարդներուդ համար, մեկնակէտ ունէր դիտարկումը Արեւմուտքի հայածին նոր սերունդին, անոր՝ հայութեան դեռ կապուած մէկ շերտին...:

Տեղւոյն վրայ ձեր ճանչցած Փրանսահայ, ամերիկահայ տարեկիցներուն մօտ, ճիշդ է, դուք հաստատեր էիք հայեցի այն ապամշակութայնացումը, որուն կը սպասէիք. լեզուական-մշակութային խորթացումը, որուն հեռակայ ծանօթացումը ունեցած էիք՝ երէցներու ողբազին ահագանգումներուն մէջէն: Բայց ինչ որ անծանօթ էր ձեզի ու կ'երեւէր իբր անսպասելի գիւտ մը՝ արեւմտեան Սփիւռքի այդ նորերուն մօտ հոգեմտաւոր բացութիւնն էր, չըսելու համար՝ վառ հետաքրքրութիւնը, հանդէպ հայեցիութեան ոլորտին՝ առհասարակ:

Բարդոյթներէ զերծ, անկաշկանդ այս տրամադրե-

լիութեան մէջ, գործնական կա՛մ ակադեմական-տեսական տրամադրելիութիւն, դուք կը տեսնէիք ստուերը անհուն կարելիութիւններու, կորսուած կարելիութիւններ՝ անցած տասնամեակներու եւ սերունդներու հաշուին: Անհատոյց պարտք, որ կ'արձանագրէիք՝ առաջին սերունդներու ղեկավարութեան ու մտաւորականութեան անունին դէմ, ուժերու ցրւումի, մսխումի՝ սիւնակներուն տակ: Կարելիութիւններ՝ սակայն դեռ «փրկելի», այս կամ այն համեմատութեամբ – քանի ի վերջոյ մարդկային որեւէ համայնք, քանակ ըլլալով հանդերձ, նաեւ ու մանաւանդ է՛ որակ, որակով կայացող...:

Այդ անդրադարձի, անսպասելի գիւտի, գործի նոր դաշտի ու մարտահրաւէրի այդ ժամանակէն՝ ահա՛, հին ընկերդ. այս կապը՝ այսօր վերագտնուող, կրկին ամրացող: Պահ մը քեզ անցեալ փոխադրող, եւ մանաւանդ ներկադ կամրջող անցեալ տեսիլքի մը, հասարակաց՝ քեզի, իրեն եւ ուրիշներու...:

* * *

... Կայուն աշխարհ մը՝ երէկի աշխարհը, կ'ըսէիր: Տպաւորութիւնը չի յղուիր միայն տեղաշարժներու սակաւութեան առարկայական տուեալին: Անիկա, 60ականներու սերունդի ձեր թեւին համար, կրող է ահա մի՛ւս՝ որակային, խորքային փաստին – լճացումի, գաղափարային ճահիճի իրականութեան: «Նահանջ»ի ողբով եւ անոր առընթեր ապիկարութիւններով բնորոշուող, եւ որ կը շարունակուէր ձեր օրերուն ալ...:

Դուք, արեւելեան կողմն աշխարհի բնօրրան ունե-

ցող, սակայն անկաշկանդ դատումներու ձգտող՝ այդպէս կը տեսնէիք «կայուն» Սփիւռքը՝ հայապահպան-ման գաղափարախօսութեան Սփիւռքը. կը կշռէիք անոր թշուառութիւնն ու սնանկութիւնը: Գաղափարային կեթօն, որ՝ ծնած Եղեռնի սարսափէն ու համրութենէն, անձա՞ծ ու բարդացած՝ քաղքենի տեղայնացումի, ապամըշակութայնացումի պահպանողականութեամբ, լաւագոյն պարագային անկապակից կիսամիջոցներու լրծւած՝ իր փոսը կը փորէր իբր հայ հաւաքականութիւն, խուճապահար, միանգամայն ողբարով այդ «մօտալուտ» վախճանը, խժարուր ողբով ու կանխիկ...: «Կը նահանջէ՞նք... կը ձուլուի՞նք»:

* * *

60ականներուն հասած սերունդ, սերունդի մը մէկ թեւը, դուք չունէիք յաւակնութիւնը ձեզ պատկերացնելու իբր ռահվիրաներ: Երիտասարդական սովորական միամիտ հպարտութիւնը չէր ձեզ ծառայողը. կը տեսնէիք շրջապատող աւերը: Նաեւ գիտէիք, որ Սփիւռքի առաջին իսկ տարիներէն՝ 1930ի շուրջ, անոր վերապրումի ուղին, պարզ ու մեկին, բայց քիչերէ, երեւի միայն տեսանողներէ՛ նկատելի՝ մատնանշուած էր արդէն:

«Հայ ոգին՝ ես ինձի՛ նմանցուցած եմ միշտ նուաբեկութենէ մը ազատող Ռուպէնտոնին: Անիկա պիտի գիտնայ ինքզինք պաշտպանել ու իր խրճիթը շինել զանազան բեկորներով... Այս սերունդը պէտք է նետէ պահպանողականութիւնը, ծուլութիւնը... պէտք է գիտնայ բացառիկ բախտը, որ ազգային դժբախտութիւնը տուաւ իրեն՝ գաղթը...»

Փախաւ, սահեցաւ մեր հայրենիքը մեր ոտքերուն տակէն, ծովին տալով մեզ: Բայց լաւագոյն առիթն է աս՝ լողալ սուրվելու համար: Մեզի կը մնայ սուգով՝ առանց երկար-բարակ չափելու, առանց վախի»:

Կամ՝ *Հափածոյի կշռոյթով՝* «Նոր է, նոր, նոր, որ անբան / Մեր տրտունջներն հեզնելով, ատելութիւնն ամբողջ մեր / Ոռոգելով, հարուստ ծով / Մը կուրծքիս տակ՝ կը ծնիմ...»

(*Երկուքն այ՛ Նիկողոս Սարաֆեանէն: Նոյնաշեշտ ելոյթներ կարելի է գտնել արդէն 30ական այլ գրագէտներու մօտ, անշուշտ Փրանսահայ):*

Սերունդ մը աւելի կանուխ, ուրեմն, արդէն տեսանողներ կը տեսնէին այդ էականը, տարրականը.- Յրօնք դարձած հաւաքականութիւն մը դատապարտուած է կորուսման՝ եթէ զիջի պահպանման վախի բնագրին, ինքնակրկնումի եւ լծացումի գառիթափին: Բայց ան կրնայ իր ճամբան ընել “ռուպէնտոնաբար”՝ «առանց երկար-բարակ չափելու, առանց վախի», եթէ զիտնայ իր մէջ վերագործօնացնել դարաւոր ատակութիւն մը միջմշակութային «բացուածք»ի, ատակութիւն՝ «միւս»ը ընդունելու, իւրացնելու, «օտար»ը հարազատելու, ու մշակութային սեփական ինքնութիւն վերակերտել-ապրեցնելու: Թէկո՛ւզ ընդլայնուող, մոլորակացող 21րդ դարեան աշխարհի մը մէջ:

Այո, այդպէս: Դուք «յուշարար»ներ էիք, ո՛չ ռահվիրաներ: Ատոր համար իսկ ձեր մէջ՝ լրջութեան եւ ինքնագիտակցութեան հաւասար էր ձեր համեստութիւնը...

* * *

Այս վերլուծումները, մտածումի այս թեմաները յաճախեր են քեզ ամէն անգամ որ՝ կարճատեւ թուիչքէ մը ետք՝ օղանաւը հպեր է գետին. եւ շնչեր ես Պէյրուսի, Պուրճ-Համուտի, Անթիլիասի խոնաւ, թխմուած մթնոլորտը:

Այս բոլորը հարագատ զգացեր ես քեզի, բայց եւ օտար՝ միանգամայն: Օտարութեան խոր, ծածուկ տպաւորութեամբ մը, ներսդ հեռուն, այլապէս իրակա՛ն ջերմութեան, խանդի խաւերու տակ ծածկուած...: Ինչո՞ւ օտար. դո՞ւն կորսնցուցեր ես հարագատութեան զգայնութիւնդ: Կամ Պէյրուսի՞ր՝ ի՞նչը...: Կամ՝ ի՞նչ հասկնալ «հարագատութիւն» պիտակով: Եղե՞ր է երբեւիցէ հարագատութիւն՝ առանց ինքնագիտակցութեան: Եւ ինքնութեան, ինքնաճանաչումի ե՞րբ եւ որքանո՞վ ատակ է եղած այս համայնքը, այս բնավայրը՝ որ ծնած է (եւ սրնա՞ծ) քեզ: Իրմէ նուազագոյն հեռաւորութեամբ մը, կենսակա՛ն հեռաւորութեամբ մը գինք արդէն պղտոր գիծերով ընկալելու փաստը՝ հաւաքական անդրադարձումի, հաւաքական ինքնաճանաչումի այդ անբաւարարութենէն չէ՞ որ կը բխի...: Հայ Պէյրուսի որքանո՞վ կը ճանչնայ ինքզինք – հարց կու տայիք արդէն չորս տասնամեակ առաջ:

Իսկ անկէ իվե՞ր...: Ահա՛. մէկ ուրիշ սերնդակիցդ, գիրի-արուեստի ճգնաւոր՝ շատոնց արդէն «Լոյս քաղաք»ի խորհրդապահ ստուերներուն ապաւինած, վերջին տասնամեակին, որմնանկարներու վիպաշարով մը՝

նոյն այս հայ Պէյրուսի առաջին կէս դարը յանձնեց գրական անմահութեան (անհամ այս փոխաբերութիւնը թող ներուի. բայց այդ է եղածը): Իսկ հոս՝ Պէյրուսի, ո՞վ անցած է անոր «Սեմեր»էն, ընկալած անոր «Նշան»ները, «Պատկեր»ները. ցնցուած՝ անոր հայրասպանին «Հարուած»էն...: Ատլանտեանէն անդին տեղի ունեցած գրական երեկոյ մը, «Երկուք» վէպին շնորհանդէսը, առիթ կու տար երիտասարդ ընկերոջ մը, ինքն ալ գրագէտ, քեզմէ առաջ նշելու փարատոքսը. որ՝ այդ վիպական աշխարհը, ստեղծագործութիւնը՝ անգիտացուած է հայ Պէյրուսիէն, այն միջավայրէն իսկ, որ անոր հուածքն է ու մեկնակէտը...:

Ամբողջ տասնամեակներու լիբանանեան քաղաքական ճգնաժամը, իրեն ընկերացող մարդուժի արտահոսքով, թերեւս պատճառ մը՝ զգայագրկման այս վիճակին...: Դժուար է հաստատել նման չքմեղանք, եթէ նոյնիսկ կարելի չէ գայն ետ մղել լրիւ...: Այլ պատճառներ ալ կան անկասկած (բայց պատճառներու հետախուզութիւնը չէ որ կը գրադեցնէ քեզ հոս. կը բաւէ հաստատել հոգե-մտաւոր մթնոլորտի, ինքնաճանաչման ձգտումի անբաւարարութիւնը...):

Արդէն՝ նոյնպիսի անբաւարարութիւն չե՞ն դրսեւորեր աւելի «բնականոն» պայմաններ ապրող սփիւռքեան շատ համայնքներ: Սկսած՝ այսօր բարեխաղան կենդանութիւն մը ցուցաբերող հեռաւոր-արեւմտեան մեծ գաղութէն, անոնք չունին անպայման աւելի հարուստ հոգեմտաւոր մթնոլորտ՝ ինքնագիտակցութեան հեռա-

նրկարի մէջ: Ու կ'այցուէս յիշատակովը ուրիշ ճգնաւորի մը, տեսանողի մը – նոր հեռացած մեր աշխարհէն...: Եւ յիշատակովը իր մէկ ցնցիչ, կենարար գործին, որուն կշիռքով կշռուեցաւ այդ մեծագողութիւնը, եւ... թեթեւ գտնուեցաւ: Արդարեւ, ինչպէ՞ս չյիշես հոս՝ հայ ինքնութեան հիւլէական տարբադադրում-համադրումը պատկերող «Օծում»ը – Վահէ Օշականի, եւ իր ստեղծած գրուեհիկ հակազդեցութիւնները...:

Ուրեմն սխալ հասկնալ պիտի ըլլար՝ քեզի վերագրել ինչ որ ստորագնահատման, ստորագասման միտում – հայ Պէյրութի հաշուին: Հարցը առաջնութեան կամ վերջնութեան հարց չէ – անդրադարձ գիտակցութեան մը ընդհանրական պակասին հարցն է, հոս թէ հոն, վի- ճակի մը՝ որ տասնամեակներ առաջ կը հաստատէիք ըՍ-փիւռքի «մայրաքաղաք»ի հաշուին, եւ որ կը յամենայ տակաւին...

* * *

Ձես մոռնար աշխարհաստան փոփոխութիւններ, մեր «փոքր ածուին» հասնող իրենց ալիքներով նաեւ.– Ու մանաւանդ՝ Հայաստանի անկախացում, պետութեան կայացում՝ թէկուզ տաժանելի ու թերաւարտ երկունքով, Սփիւռքի անսպասելի աճում ու բազմապատկում, Եւ թոճական-քանակային, Եւ աշխարհագրական գօտիներու, Եւ հայու «ազգագրական» տիպարի նոր, յաւելեալ բարդացումով: Որոնք աննախընթաց «խղճի քննութեան», ինքնութեան՝ քննութեան մը ատեանին առջեւ

քաշեցին Սփիւռքը՝ առանց խորքային նուազագոյն պատրաստութեան: Ջայն պարպեցին իմաստէ, իր ընկալեալ իմաստէն. միւս կողմէ երեւան հանելով, պարտադրելով արեւու լոյսի պէս պայծառ՝ գիտակցումը անոր ոչ-ժամանակաւոր կարգավիճակին: Սփիւռք-Հայաստան մնայուն, համաժամ գոյակցութեան մը ճակատագրին: Արդէն կանխատեսելի, եթէ ոչ իսկ հաստատուած իրադրութիւն, բայց այժմ՝ ի պէտս կարճատեսներու եւ ջայլամներու:

Ուրիշ ի՞նչ բերաւ մեզի անցնող քառասնամեակը – համաշխարհային հոլովոյթէ բխած նոր իրադրութեան մը կրաւորական ընդունումէն անդին: Համասփիւռքեան, ապա համազգային որոշ կառոյցներու ստեղծում, ազգային էական ձգտումներու հետապնդում միջազգային բեմի, այլեւ փաստը՝ պարտադրուած պատերազմի մը մարտահրաւէրը վերցնելու եւ յաղթական դուրս գալու...: Այս բոլորը, չես մոռնար, կը կազմեն հաշուելի չիւրի տախտակին դրական թեւը՝ «պահանջ»ներու սիւնակը: Ազգային պետութեան կայացման մէջ անոնց առկայութիւնը՝ զգալի: Թէեւ յաճախ ծանրօրէն անբաւարար – այս ալ, երեւի, օրինաչափ ուղեկից-ախտանիշը՝ բոլոր Հայրենիքներու եւ Սփիւռքներու յարաբերութիւնները ախտահարող...

* * *

... Բայց այս բոլորը շատ հեռու կ'երթան, կը խուսափին համառօտութեան ձգտող ընդգրկումէդ: Եւ քեզ

կը հեռացնեն Հայկազեան համալսարանի մատենադարանի մտերմիկ մթնոլորտէն. ու նոր հանդիպումէ՞ղ: Վայելքէն՝ կրկին ներկային բերել-առնչելու տասնամեակներ առաջ ընդհատուած գրոյցի մը թեմաները. ներյայտ կապերը:

Բայց եւ ծնող փոստանքը, ինքնա-մեղադրանքը՝ թէ ինչո՞ւ չես պահած, չէք պահած կապը համակողմանի ճիգով...: Ինք՝ դասախօս ընկերդ, Սփիւռքի արեւմտեան կողմանց ծնունդ, անոր ուղիներու մենաւոր ճամբորդ, խոպանացող հողերու վրայ հայնոր մշակոյթի հերկ ընող հագուազիւտներէն: Ճգնաւոր մը իր կարգին՝ նոյնքան քիչ ճանչցուած, որքան իր սերնդակից-բախտակիցները (վկայ՝ իր հիմնած-խմբագրած վերլուծական «Կամ» հանդէսին յաջորդական ճոխ հատորները, մամուլի մէջ ցրուած վերլուծումները. չհաշուած դեռ՝ օտարալեզու ծանրակշիռ հատորներ): Դուն՝ որուն հարազատ է ճգնութեան այս աշխարհը. նոյնիսկ եթէ այլ ձգտումներ քեզ հեռու պահած են ամբողջական ներդրումի նոյնպիսի քայլէ:

* * *

... Ապա՝ լսարանն էք, ուսանողներուն հետ գրոյցի: Անոնք ժամանակը ունեցած են, քանի մը ամիս, ընկալելու իրենց դասախօսին հիմնական հարցադրումները, մտահոգութիւնները: Արդէն՝ ինչպէ՞ս կրնար ինքնութեան որոնումը, հայեցիութեան նոր ձեւակերպումներու առաջադրանքը հարց չըլլալ - նոր, արթուն

մտքերու համար:

Եւ նորերը կը խօսին, կը հարցադրեն: Զրոյցը կը դառնայ իրենց քննարկած մէկ գրութեան շուրջ, քաղուած նոյն այդ 60ականներու «Ահեկան» պարբերաթերթի էջերէն: Միշտ՝ հաւաքական ինքնագիտակցութեան, սեփական իրագործման առնչուող թեմաներու արծարծումով: Քառասուն տարի առաջ, եւ այսօր. 60ականներու Սփիւռք եւ 21րդ դարասկիզբի Սփիւռք... Նոր կացութիւններ, նոր պայմաններ...

Պահ մը, կարծես գրոյցի ալիքը ճեղքող թիւովարուումով, հին ընկերդ քեզի կը դառնայ. «Եւ մե՞նք ի՞նչ կրցանք ընել,- հարց կու տայ,- մե՞նք՝ որ ճամբայ ելած էինք մեր երէցներէն տարբեր գործելու, Սփիւռքը իր քայքայումէն դուրս բերելու առաջադրանքով...»

Հարցումը հոն հարցում չէր՝ հաւանօրէն՝ պատասխանի սպասող: Քեզի համար, ըսիր արդէն, հարցադրում է: Ինքնահարցադրում: 1968ի երիտասարդական «Ահեկան»ներէն մինչեւ 2008ի ուսանողական լսարանները, մինչեւ ծալովի էջերը երիտասարդական մամուլի նորօրեայ մենաւոր ճամբորդ «Ի Դէպ»ի (որուն համար գրի կ'առնես զայն),- այդ հարցադրումը ինքնութեան որոնման մը, ինքնագիտակցային ճիգի մը անվերջանալի հրամայականին շեշտումը կը կանչէ ամէն բանէ առաջ: Դիմագրաւելի նոր կացութիւններու մէջ՝ անիկա «ամէն բոլոր լուծելի, բազմաթիւ անձանօթներով, բարդ հաւասարում է» պիտի ըսէիք երբեմն:

Բայց հոս, այս պահուս, հարցադրումը ականջիդ կը

հնչէ նաեւ տեղ մը կրուած հաշուեպահանջ հարցականի շեշտով:– Ի՞նչ եղաւ ձեր ճիգին, լարումին ելքն ու արդիւնքը: Ի՞նչ եղաւ երազուած, սպասուած, կանչուած «ձեր» Սփիւռքը, «վաղուան Սփիւռքը»: կայացա՞ւ՝ իր ներկային հետ ա՛լ հաշտ, օտարումէ ձերբազատ, ցրուած բայց ցրուումին մէջ միացած, ցրօնքը յաղթահարած Սփիւռքը – իբր համայնական կեանքի ուրոյն ձեւ: «Մենք ի՞նչ կրցանք ընել»...

Արդեօ՞ք կիսակառոյց Սփիւռքի մը մէջ՝ կարելի է ձգտիլ միայն փակ, փոքրաթիւ հոգեմտաւոր հարազատներու համայնքի մը...: «Կարելին անօրէն միայն – անընթաց կան կարելին...» – ինչպէս Թէքէեանի մը համար...

Սոստովանէ՛, որ երբեմն այդ միակ կարելիութիւնը կ'երեւի քեզի իբր հեռանկար – եթէ կրնաս հեռանկար կոչել այնքան անձուկ, գոց հորիզոն մը: Բայց երբեմն ալ՝ կ'ունենաս յաւելեալ կարելիներու ներմացումը (յո՛յսը): Կ'ըսես՝ ինքնախարէութիւն չէ հաւատալ նոր գաղափարներու անզգալի, աստիճանական թափանցումին «հիմնարկայնացած» միջնաբերդերէ ներս: Երբեք անակնկալի չե՞ս եկած, վերջին այս տարիներուն, նման ամրափակ ենթադրուած վայրերու մէջ գտնելով արձագանգը հեռուոր կանչերու: անոնցմէ՝ որ ատենին անպատի մէջ կը հնչեցնէիք դուք եւ ուրիշներ...:

... Մինչ այդ, լուռ հարցում-հարցադրումներու խորքին վրայ, 2008ի համալսարանական տղոց հետ գլոբալ-գլոբալ գրոյցը ահա հասած է նշելու հայ ինքնութեան նոր տուեալները – «հաւասարումին» նոր անձանօթները:–

Հայրենիքի հետ նոր, բարդագոյն յարաբերութիւն մը: նոր հրամայականը՝ հայու ազգագրական-մշակութային աւելի՛ եւս ընդլայնուած տիպարի մը, որ ընդգրկէ «հին» ու «նոր» Սփիւռքներէ մինչեւ կորուսեալ, օտարացեալ հայրենի տարածքներու վրայ բարքերով, լեզուով, երբեմն ե՛ւ կրօնքով օտարուած հայ համայնքներու այնպէս կարելիութիւն՝ յարումի, համարկումի, նախաձեռնարկ մասնակցութեան...

Ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ, ինչպէ՞ս կ'իրագործուի ինքնանորոգման, ընդլայնումի այդպիսի գործընթաց մը...: Ո՞չ՝ ատենին անպատասխան մնացած կանչերու ներգործութեամբ: Անուղղակի, քիչ նկատելի ներգործութիւն մը: գաղափարական սերմերու հեռուոր ծլարձակում՝ դանդաղ ու մասնակի, բայց անխուսափելի...:

Եւ ե՞րբ, ո՞ւր արդէն այդպէս չէ եղեր յարաբերութիւնը յառաջապահ գաղափարներու եւ հաստատուած կառոյցներու, նոյնիսկ ազգա-պետական բնականոն կենսաձեւի մէջ – ընթացող նոյն դանդաղ, մասնակի արդիւնաւէտութեամբ...:

Բայց... «Մենք ի՞նչ կրցանք ընել...» – հարցումը թո՛ղ մնայ բաց, անպատասխան: Ըլլայ խոնարհ թելադրանք ու պատգամ՝ հարցադրումի: Մնայուն ինքնահարցադրումի:

Յարութիւն Քիրքճեան

~ ՉԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ~

- Պատրաստ բան մը ունե՞ս:
- Երանի ունենամ. ամէն ինչ չորցած է կարծես:
- Վստահ ե՞ս: Լսեցի ուրիշներու տուած ես եղեր:
- Հաւատայ, որ բան մը չկայ: Այդ եղածն ալ պարտադրանքի եւ արկածի հետեւանքով եղած բան մըն էր:
- Կը կարծե՞ս, որ բան մը կրնաս մէջտեղ բերել քանի մը օրէն:
- Անկեղծօրէն, յոյս մի ունենար: Ժամանակ չունիմ:
- Ժամանակը դուն պիտի ստեղծես:
- Եթէ ժամանակ չի նող մը կը ճանչնաս, անուընդ տուր, որ այդ գործը իրեն տամ, որովհետեւ իսկապէս ստեղծագործութիւն պէտք է այդ հրաշք ժամանակը գտնելու համար:
- Վերոնշեալ առեւտուրը թմրեցուցիչի ճախող վաճառականի մը եւ յուսալքումի սեմին գտնուող յաճախորդի մը միջեւ չէ, որ տեղի կ' ունենայ, այլ անհետացումի վտանգը դիմագրաւող հրատարակութեան տեսակի մը՝ հայերէնով գրական թերթի մը խմբագրին ու գրողի մը միջեւ:
- Լաւ, խոստովանիմ. երկխօսութիւնը մօտաւոր արձանագրութիւն մըն է իմ ու անհաւատալի լաւատեսութեամբ օժտուած այս թերթին խմբագրին միջեւ տեղի ունեցած հերթական խօսակցութիւններէն մէկուն, որոնց քանակը եւս սկսած է նուազիլ:
- Այս անգամ խոստացայ բան մը գրելու մասին

մտածել եւ գիտակցելով հանդերձ, որ այսքանն իսկ գրելու արարքը կրնայ հարցականի տակ առնել ժամանակ չգտնելու կապակցութեամբ տուած պատճառաբանութիւններս, որոշեցի բան մը տալ, առնուազն գրելու սովորութեանս մէջ ինկած ժանգը մասամբ մաքրելու յոյսով: Միաժամանակ յուսալով, որ անգամ մը գոնէ տուած պատճառաբանութիւնս արդարացի կը նկատուի, բայց կը կասկածիմ:

- Ժամանակ չկայ գրելու.
- Ժամանակ չկայ ապրելու.
- Ժամանակ չկայ կարդալու.
- Ժամանակ չկայ շեղելու.
- Ժամանակ չկայ ճեղքելու.
- Ժամանակ չկայ ստեղծելու.
- Ժամանակ չկայ մտածելու.
- Ժամանակ չկայ գրելու:

Ժամանակը, որ կ' ուզէի ամենակարող պատրուակի մը վերածել, իյուած է (յանձուած է) կեանք կոչուած ճիւղին կողմէն եւ հետաքրքրական է, որ առանց այդ կեանքը ապրելու, կարելի չէ կարդացուելու արժանի տողեր գրել: Կայ անշուշտ ստեղծագործելու հանճար ըլլալու ընտրանքը, որ իմ պարագայիս ի գօրու չէ:

Այսքանը կարծեմ բաւարար է հաստատելու չգրելու որոշումիս արտարացիութիւնը. աւելին անտեղի կասկածներ կրնայ յառաջացնել:

Գէորգ Մանոյեան

~ ԻՆՉ ՈՐ ԿԸ ԿԱՆԽԷ ~

Ամէն չափէ, ամէն կողքէ, հաստ ու բարակ, գծաւոր կամ քառակուսի, երբեմն նոյնիսկ առանց գիծի տես-
րակներ՝ որոնք կու գան զանազան երկիրներէ եւ կը
պահպանեն էջադրումի զանազան աւանդութիւններ,
թղթեղէն նիւթի որակի, պատրաստութեան տարբեր եղա-
նակներ, ճարտարութիւններ ու արհեստներ ծառեր
կտրելու, գործածուածը կրկին գործածելու, ատաղձը
տափանելու, մամլելու, երակ-երակ թելթելելու, նախ-
քան ընդհանուր, ճակատագրական միամակարդակումը:

Ատոր չէ՞նք դիմեր: Համաշխարհային նոյն ու միակ
աննիւթեղէն էջին:

Շատ ամգամ կը ստանամ նուէր: Ընծայողը կը կա-
րծէ թէ գրող եմ որուն համար ատոնք անհրաժեշտ են:
Ի՞նչ հարկ, կ'ըսեմ մերթ, մերթ ալ, կ'ուզէք որ այդ բոլո-
րը լեցնե՞մ: Իբր թէ կը սարսափիմ այդ հաստկեկ էջերէն,
որոնք ճիգ, աշխատանք, ժամանակ կը պահանջեն,
ինչպէս գուեհօրէն բայց ճշմարտապէս կ'ըսենք ուրի
վրայ տիտիկ ընենք՝ որպէսզի դառնան խօսուուն: Շնորհա-
կալութի՛ն, ի՛նչ նեղութիւն, կը կրկնեմ, կը գետեղեմ
զգրոցին մէջ, ուր տարիներու ընթացքին հաւաքուած են
նման ուրիշ տետրակներ, պիտի չգործածեմ:

Կը նախընտրեմ... երթալ գնել նորը, իսկ նուէրը
պահել: Նուէր մը ուրիշին չեն տար՝ կ'ըսեն, չէ՞: Ուրիշ՛ը:
Բայց ան հոն է, տետրակի ետին, նոյնիսկ մէջը, անմիջա-

պէս որ փորձուիմ երկու բառ նետել լեզուէն, ասոր մէջ:
Այդ պահը կայ երբ միտքը կը ջանայ, պատրանալից
արարքով մը, փակագիծի մէջ դնել այդ բացուածքը, այդ
արտահոսումը, այդ լեզուեղէնը իբր թէ պիտի կարենայ
ըլլալ ինքզինք, այդ իբր թէ ներքին ներհայեցողական
խոկումին մէջ, ուստի կը մերժեմ երկթերթ դէմքը միւ-
սին, որուն շրթները կրնան բառերս կորզել բերնէս:

Չեմ կրնար հաստատել որ տետրակի մը ծաւալը կը
խրտչեցնէ, թէեւ կը պատահի որ երբեմն էջերը սկսիմ
սկիզբէն կամ վերջէն, նոյնիսկ մէջտեղերէն, կանգ չառ-
նելու համար խոչընդոտի առջեւ: Միայն թէ պարապ
տետրակները, երբ գրելիք չունիմ, կը թուին բովանդա-
կել իրենց մէջ ճերմակ կոչ մը, գրեթէ լսելի կանչ մը,
որոնց չեմ ուզեր ընդառաջել, լեցնել տարածութիւնը
որեւէ բանով, խոնարհիլ, ենթարկուիլ այդ հրաւէր-
հրամանին: Քանի կ'անդրադառնամ, գոնէ սկիզբը, որ
պարապ էջի վախն է որ կը հեռացնեմ ես ինձմէ եւ հար-
կադրանքը դիմակալելու գայն օրերով, ամիսներով, մին-
չեւ հասնիմ ծայրը: Ծայրի մը գամ, բայց ինչի՞:

Ճերմակ էջին վախը կարելի է գտնել ամէն տեղ, հի-
նէն նորէն, նոյնիսկ պաստառին առջեւ, տետրակը մաս-
նաւորեալ պարագայ մը չէ ինքնին: Եւ յետոյ, տարիներ
ու ընթացքին, լրագրողի, վարժապետի կամ ուսանողի
վարժութեամբ դադրած եմ այդ սուր վախը, այդ «թրաքը»
ինչպէս կ'ըսենք ֆրանսերէն, գգալէն: Մնաց ալ որ առ-
անց այդ ներքին նեղիկ անդհին կը թուի որ բան մը կը

պակսի, ինչ մը որ խթանէ, արգիլէ-արտօնէ թափը: Ինչը, երբը, ուրը, ինչպէսը, ովը զիս արդէն որոշ չափով կ'ազատագրեն ճնշումէն եւ կու տան թեթեւութիւն մը, խաղաղութիւն մը, պիտի ըսէի պայծառութիւն մը: Նախատեսուած հարցումները կը փրկեն զառածումէ, մտաւորական դատարկ դեգերումէ, քիչ մը հին հռետորութեան տեղիքներուն նման: Պատասխանները կը գտնուին հարցումին մէջ: Ասոր տեսակին, եղանակին, ձեւին ու շեշտին: Դիւրութիւն մը, թէ՞ խուսափում մը էականէն: Սակարկութիւն մը: Կը ջանամ տէրը մնալ մտքիս, զգայարանքներուս, տեսնելու, լսելու կարողութեանս, մանաւանդ ի մտի կը ջանամ պահել դիտումը, նպատակը, հոն, հեռուն գտնուող հեռապատկերը, որուն առգայտ զանգուածը կը փրկէ զիս հոս-հոն դեգերելու, կորսուելու վտանգէն: Պարապ էջը տեսրակին մէջ կը ծածկէ պարապ տեսրակին սարսափը: Ճերմակը կ'արգիլէ՝ Բայց ոչ: Երբ կը բանամ, կը դարձնեմ կողքը, կը թերթեմ, փորձութեան չեմ մատնուիր որեւէ բան գրելու: Միայն այն պահուն երբ կ'առնեմ ձեռքս եւ կշռելու պէս կը կրեմ բուռիս մէջ, այն ատեն կը զգամ ժամանակի եւ տարածութեան, այդ երկուքին ծաւալին վերածուած դատարկութիւնը: Ոչինչ կարելի է ըսել այդ մասին, ոչինչ, եթէ ոչ այն որ տեսրակը կը թուի լեզուին մէջ բացուող երկար քերձ մը, տեսակ մը անպատումի, անբարբառի, անասելիի պատուածք՝ իմ բոլոր գիտելիքներս զօրութենապէս չքացնող եւ խախտող բոլոր վարժու-

թիւններս, ապահովութիւնս, երեւակայական անխոցելիութիւնս:

Քանի որ այս անձկութիւնը մշտական վիճակի մը կրնայ վերածուիլ, կ'ընտրեմ պահը, տեղը, երբ տեսրակ մը պէտք է, որով կրնամ դիմագրաւել ապառնի ժամանակս, գոնէ պատրաստուիլ անոր՝ ծէսին համար զգեստաւորուող նորելուկ քահանային պէս որ պատրաստի նախադասութիւնները կը կրկնէ մտովին որպէսզի մէկէն չպապանձի, այլապէս աստուածը պիտի անբառ մընայ, այսինքն՝ հեռանայ ու լքէ զինք: Թերթը պարտի բացուիլ նախաշաւիղի մը հանդիսաւորութեամբ: Մանաւանդ որ պիտի ընթանամ անոր վրայէն, ճամբորդեմ, ինծի պիտի ընկերակցի օրերով, ամիսներով, դառնայ ոչ թէ բարեկամ մը, մտերիմ մեղսակից մը, որուն պիտի խոստովանիմ ամէն բան, իբր թէ ամէն բան, խել մը անհեթեթութիւն ու մտամարգանք, այլ մոզական կախարդաթուղթ մը պիտի ըլլայ, որ ձեռքիս, մտքիս՝ պիտի վանէ աւելորդն ու թափփուքը, իրեն քաջէ աշխարհը կամ ինք համայուի ուրուանկար աշխարհով: ... Կարելի է ամէն ինչ փոխադրել տողերու վրայ, շարակարգել, բազմապատկել երեւակայական էականերուն թիւը, ամէն բան ըսել: Եղածը շունչի հա՞րց մըն է: Ինչո՞ւ ոչ: Միայն թէ չեմ դադրիր հաստատելէ ակամայ որ ամէն բան չեմ գրուեր, կը մերժեմ այդ ճերմակի թագաւորութեան վրայ յօրինել բժաւորեալի ուրիշ, խախուտ, թէական շէնք մը, ուր երբեմն կը մտածեմ որ պիտի ապրիմ, պիտի ապրեց-

նէ գիտ իր տուած ենթադրական կամ ըղձալի հանգիստով: Ուժ-անզօրութիւնը՝ բնախօսական, բարոյականը՝ ընկերային, խոցը՝ հոգեբանական պարագաներ են: Կայ չգրելուն հաճոյքը որ անգործութեան երկիւղին նման կը պատկանի գրելուն: Իսկ չգրելու կամքը, այն մէկը որ պիտի անդադար հաստատես որպէսզի խախտես, կը պատկանի չէութեան, ուզել-չուզելուն հետ կապ չունի:

Հոն չէ՞ արդեօք տեսրակին տեղը, օհ, իսկապէս, անհիմն ու վարատական վայրը:

Առանց անոր փողոցէն անցնիլս, սրճարան մը նըստիլս, ճամբորդելս կամ դասաւանդելս պիտի դառնան փորձանքներու առիթներ, ռիսքեր, մարտահրաւէրներ թերեւս: Այդ պահերը կը կազմեն կակազումի ժամանակըս: Որով ձեռքը կ'երթայ կու գայ թուղթին վրայ արեւուն, շուքին պէս: Մերթ գրութեան սկիզբներ, բառերու ցանկ մը, հայհոյանքի չլսուած տեսակ մը, բացագանչութիւններ, կամ ուրիշ տեղ սկսուած էջի մը շարունակութիւնը, վերջապէս տեսնուած պատկեր մը կամ յիշուած դրուագ մը, դէպքէ մը, մարդէ մը գիծեր, դրդում, խրուովք, այսինքն՝ փշրանքներ, ծուկներ, ասուպային բոց-կըլտումներ, միայն նախագիծեր մտքի մը համար որ չ'ուզեր անակնկալի գալ կամ անակնկալը կ'ուզէ որպէսզի չհամայուի անկէ, չի հանդուրժեր խորտակումին, հակամէտ չէ ստանձնելու հատնումին սպառնալիքը, բնա՛ւ, եւ մարդկային կամ ջորիի յամառութեամբ մը կը համարձակի լռութեան արկածախնդրութիւնը հեռացնել,

տեղքայները, ոստումները կանոնաւորելով, կշռոյթի մը բերելով, կըրցածին չափ պահել հեռուն, բացը, սահմանէն անդին, ինչպէս անիմաստով ընկրկելու, գեղեցկութեան տեղի տալու հարկը քաղաքակրթական պատրուակ-պատնէչով մը կը սահմանաւորենք:

Ձինական, հնդկական, յունական, արաբական, ամերիկեան, աշխարհի տեսրակները կը դիզեմ գգրոցիս մէջ. կը պահպանեն խլրտուն, մշտապէս բողբոջող, ինքն իրմէ դուրս յորդող ժամանակի տիեզերք մը, ինչպէս պարապը՝ կ'ըսուի, կեդրոնն է արարչագործութեան:

Գրիգոր Պըլտեան

~ ՉԳՐԵԼՈՒ ԸՆԹԱՅԸ ~

Կարծեմ Ձէրնին էր, որ կ'ըսէր՝ երբ մէկ օր չնուագեմ, Աստուած կ'իմանայ, երբ երկու օր չնուագեմ, ես կ'իմանամ, իսկ երբ երեք օր չնուագեմ, ամէն մարդ կ'իմանայ...

Եթէ հայ գրողը չգրէ, ո՞վ կ'իմանայ...

Հարցումը գարմանալի՞ է, անտեղի՞ թէ, թէ՞ վիրաւորական:

Բոլորն ալ:

Ձարմանալի է, որովհետեւ վերջերս (այս «վերջերս»ը կ'երկարի մէկէն մինչեւ տաս-քսան տարի) հայ ընթերցողներուն թիւը հասեր է կարելի նուագագոյն տոկոսին. ուրեմն ինչո՞ւ է հարցումը, գիտական այս իրողութեան առջեւ:

Անտեղի է, որովհետեւ որո՞ւն կը խառնուի հայ գրողին գործը՝ կը գրէ՛, չի գրե՛ր, չի կարդա՛ր, կը խմէ՛, կ'ուտէ՛... մարդը ազատ է ի՛ր օրը իր ուզածին պէս ապրելու. ուրեմն ինչո՞ւ է հարցումը:

Եւ ի վերջոյ վիրաւորական է՝ ո՞ր հայ գրողը արհեստավարժ օրակարգով եւ ծրագիրով կրնայ աշխատիլ (ապրուստը ո՞վ շահի), որ գրել-չգրելը հարց դառնայ:

(Բացառութիւնները յարգելի են միշտ, չէ՞):

Կան սակայն գրողներ, որոնք «գրող»ի դասակարգին չեն պատկանիր, որովհետեւ բնաւ հետաքրքրուած չեն ներբողներով, գինեձօներով կամ պարզեւատրումներով: Անոնց համար գրելը ըլլալու կերպ մըն է, ու երբ չեն գրեր, չըլլալու պէս վիճակի

մը մէջ կ'իյնան:

Արարերէն առածը կ'ըսէ՝ աւելի լաւ է փորձառուին կարծիքը, քան՝ իմաստունին:

Եւ ուրեմն, հաւատացէ՛ք, այս «չըլլալ»ը այնքան է ութենական է, որ...

Քանի մը օր առաջ բացայայտուեցաւ, որ այս վիճակը նաեւ... փոխանցիկ է.

չեմ գրեր

չես գրեր

չի գրեր

(Նոր ուսուցիչները կը թելադրեն՝ չգրեր... եւ բոլորս միասին՝ չենք գրեր):

դո՞ւն ալ

ի՞նքն ալ

է՛ս ալ

Օր մը, պատահաբար տետրակ մը գներ էի՝ հաստ ու միագիծ, թափանցիկ շապիկով, ներսի կողմը երկու գրպաններով, որոնք շատ յարմար են թղթիկներ եւ կըտրօններ պահելու համար: Այնքան գոհ մնացի, որ գացի հատ մը եւս գնելու:

- Այս քանի մը հատը մնաց, - ըսաւ ծախողը, - եթէ շատ հաւնեցար, բոլորը ա՛ռ. ա՛լ չեն արտադրեր այս տեսակէն:

Շատ հաւնեւ էի եւ բոլորը գնեցի, տաս-տասնըհինգ տետրակ:

Կ'երեւի այս տետրակները ուղուրսուզ եղան, կամ՝ անոնց դէզին նայելով ենթագիտակիցս սարսափեր էր՝ ինչպէ՞ս պիտի լեցնեմ այսքան տետրակը:

Չէ՛, համակարգիչը մաքրագրելու համար է միայն:

Ես կը շարունակեմ վայելել տետրակներու եւ գրիչներու իմ սէրս, վայելել գրիչին խփստոցը թուղթին վրայ, վայելել ասիս զգացումը թուղթին շփուելով: Այս բոլորը սակայն սիրոյ հանդիպումի մը պէս ռոմանթիկ կը հնչեն, եւ ուրեմն՝ պատրաստութեան կը կարօտին. մարդ իր սիրածին հանդիպելու համար չի՞ պատրաստուիր, չի՞ տրամադրեր ինքզինք, ժամանակ չի՞ յատկացներ:

Ժամանակ բառը լսելով, բոլոր գրողները, որոնք մինչ այդ լուռ եւ քիչիկ մըն ալ անտարբեր կը հետեւէին, յանկարծ կը վերագտնեն իրենց եռանդը եւ բոլորը միասին կը սկսին խօսիլ.

- Չկայ չկայ չկայ...

- Կը վազենք ու չենք հասնիր...

- Ո՞ւր կը վազէք...

- Օրուան հացին ետեւէն, որ ինքն ալ, իր կարգին, տաք ու կարմրուկ, կը վազէ եւ մեծաքայլ կը հեռանայ...

Այստեղ, այս «ժամանակ»ին շուրջ հայ գրողները բոլորն ալ, զարմանալի միասնակամութեամբ, մոռցած իրենց տարակարծութիւնները կը համաձայնին մէկ հոգի ու մէկ ձայն դարձած:

Բայց ի՞նչ օգուտ, երբ բոլորին ալ թուղթերը կը շարունակեն տխուր-տրտում վիճակով պարապ մնալ...

Լուծումը ո՞ւր է, ելքը ո՞ւր է, փրկութիւնը ո՞ւր է:

Թերեւս ա՞յս էջերուն:

Յ.Գ. Աւելի մտահոգիչը սակայն լեցուն եւ առատ թուղթերն են, որոնք... ներսէն պարապ են:

Մարուշ Երամեան

~ ԻՆՉՈՒ ԳՐԵԼ ~

Այդաին

Սիրոյ պարունակութիւնը սա է, որ երկու մենութիւն պահպանեն եւ զգուեն եւ ողջունեն իրար:

Բէյնըր Մարիա Բիլքա (1875-1926)

Կէս-հոկտեմբերեան յետմիջօրէ էր, այն օրերից մէկը, որ բաւականաչափ տաք եւ արեւի տակ, իսկ նեղացուցիչ կերպով ցուրտ եւ զգում շուաքում: Քանի որ գրասենեակս գտնուում էր շէնքի այն ծայրը ուր կարծես միանգամայն մոռացուել էր արեւի կողմից, մրսում էի: Նոյնպէս ձանձրացած եւ ճնշուած էի: Ճշգրիտը Երեքշաբթի, Հոկտեմբերի երեքն էր, դասաւանդում չունէի եւ նոսր-նոր ստացել էի պաշտօնական մերժումի այլ մի նամակ: Երեխաներս յետ էին ուղարկուել ինձ: Ոչ ոք կարծես հետաքրքրուած էր պարսկահայի անգլերէնով գրուած բանաստեղծութիւններով: Բացառիկ աւիթ էր, կարճ ասած, ինքնախղճումի եւ օղիի համար:

Որոշեցի հարբել նախասիրածս բանաստեղծներից մէկի հետ: Գրասեղանիս ետեւ նստած գննեցի գրադարանի յարկերը յուսալով գտնեմ Հաֆէզ, Սան Ժօհն Փրէ, Նահապետ Քուչակ, Բիլքա, Շամլու, Էլյոթ կամ այդ տեսակի բաներ, որ քիչ ինչ գրաւիչ էին երեւում: Սակայն գտածս ակադեմական գրքեր էին, գրքեր բանաստեղծութեան մասին: Մինչ շարունակում էի փնտռել, մէկը

դուռը թակեց: «Ներս մտիր», ասացի, սարսափահար որ ուսանողներին մէկն է լինելու իր ճանճարալի աւարտածառի անմիտ գլուխներին մէկով:

Մի փերիներս մտաւ: Սեւ ու երկար մագերով մի փերի: Եօթ տարեկան որդուցս աւելի մեծ չէր, թեւերը թափանցիկ էին եւ ունէին դիւթիչ նախշեր, սակայն ծալլած ու խամրած էին: Ծածկուած էր կեղտոտ ցնցոտիներով եւ ոտաբոպիկ էր: Գունատ էր, նիհար, սակայն գեղեցիկ: Խղճացի իրեն, միեւնոյն ժամանակ ահաբեկուեցի: Չգիտէի ինչ ասել: Այդպէս կանգնեց գրքերով ու ցիրուցան թղթերի կոյտերով շրջապատուած գրասենեակիս անկիւնում: Հոգիս այրուեց ու հալուեց այդ խոշոր եւ սրճագոյն աչքերի ներկայութեամբ, տխուր աչքեր, որոնք դիմեցին ինձ մի լեզուով որ միայն պարսիկ բանաստեղծը կը հասկանայ:

Փոխարէն ասելու նստիր, փոխարէն ասելու բարեւ, տարօրինակ պատճառով հարցրի, «Անթի ե՞ս»: Գլխի շարժումով դրական պատասխանեց: Ասացի, «Կարող եմ մի բան հրամցնել», գլխի շարժումով կրկին դրական պատասխանեց: Նկատեցի աչքերը յարել է գրասեղանիս մերժուած բանաստեղծութիւններին: Հարցրի, «Կը ցանկանայիր տեսնե՞լ դրանք»: Ծրթերը անջատեց եւ շնչաց, «Կարելի՞ է բնագրերը տաս»:

Ընդհանրապէս գրասենեակս շարունական քառսի մէջ է: Երբեք չեմ կարողանում մի բան գտնել: Սակայն գրասեղանիս ունեմ մի գրոց, վիշապի երախի պէս մեծ, ուր նետում եմ ինչ բանաստեղծութիւն որ գրում եմ:

Ուրեմն կուսցայ, գրոցը քաշեցի, եւ դուրս հանեցի մի փունջ ձեռագիր բանաստեղծութիւններ: Առանց ստուգելու որոնք են, պարզօրէն մեկնեցի փոքրիկ անթի փերիին, որ բարի էր գտնուել այցելելու ինձ այս ցուրտ, ճանճարալի եւ թախծոտ Երեքշաբթի յետմիջօրէին:

Վերցրեց եւ առանց որեւէ բառ ասելու սկսեց ուտել: Միտքս այն չէ որ աչքերով կերաւ, նոյնիսկ դրանց չնայեց, պարզապէս խոթեց փոքրիկ բերանի մէջ, երբեմն երկու-երկու, յետոյ ծամեց եւ կուլ տուեց բանաստեղծութիւններս: Ես միայն նայեցի իրեն մինչեւ որ վերջացրեց: Երբ վերջացրեց, շրթերը լիզեց եւ ժպտաց: «Լաւ ե՞ս», հարցի, ինչ որ ձեռով հնչելով յիմար: «Այո, շնորհակալ եմ», ասաց նա, «չատ համով էին»: Յետոյ դուռը բացեց ու գնաց: Ամբողջ մէկ րոպէ տեւեց մինչեւ հասկանամ պատահածը, որ գիտակցեմ չեմ երագում:

Վեր կացայ եւ գրքերի ու թղթերի վրայ սայթաքելով շտապեցի միջանցք: Միջանցքում կային որոշ ուսանողներ եւ գործակիցներին մէկը քայլում էր դէպի իր գրասենեակը: Մինչ անցնում էր, ժպտաց ու բարեւեց: Կանգնեցի այնտեղ, ապշած: Փերիիս հետք չկար: Փերիս կորաւ անհետ: Վազեցի շէնքից դուրս եւ շուրջըրորս գննեցի: Այնտեղ չէր, ոչ էլ համալսարանի որեւ ուրիշ անկիւնում ուր մէկ կամ երկու ժամ փնտռեցի: Երբ վերադարձայ, ուսանողներից մէկը որ նախօրօք տեսել էի իրեն դեռ միջանցքի նստարանին նստած կարողում էր: Մեռնում էի որ իրենից հարցնել թէ տեսել է փերիին, սակայն անկեղծ ասած, վախեցայ: Արդէն իմ մասին

մտածում էին որպէս եսակենտրոնի եւ խելագառութեան
ենթակայի մէկը, չէի ուզում հակարակորդներիս ար-
ծաթէ մատուցարանի մէջ յաւելեալ փաստեր հրամցնել:
Մտայ գրասենեակս, դուռը փակեցի, եւ շատ անորոշ,
նոյնպէս չվերաբերող պատճառներով, արտասուեցի:

Շուրջ եօթ կամ ութ օր յետոյ անակնկալօրէն եւ ի
ցնծութիւն ինձ փերին վերադարձաւ: Այնքան ուրախ էի
իրեն կրկին տեսնելուց որ մոռացայ անգամ հարցնել թէ
ուր կորաւ այդ Երեքշաբթի օրը: Իրեն տուի աւելի բան-
աստեղծութիւններ եւ ինքը միայն կերաւ: Հիանալի էր
տեսնել որ այդպէս ախորժակով եւ խանդավառութեամբ
ուտում է բանաստեղծութիւններս: Երեւում էր որ ան-
կեղծօրէն սոված է եւ վստահ էի որ վայելում է իր ու-
տելիքը:

Դրանից յետոյ, իմ փերին այցելեց ինձ սովորական
յաճախականութեամբ: Երբեմն ինձ հետ խօսում է հայ-
երէն, երբեմն պարսկերէն, երբեմն անգլերէն: Այժմ ա-
ւելի ուրախ ու աւելի առողջ է երեւում քան առաջին
անգամ որ իրեն տեսայ: Իր թեւերը շտկուել եւ ստացել
են ջերմ մի փայլ, արեւի լոյսի նման: Հագնում է մետաք-
սէ մանիչակագոյն այն զգեստը որ անցեալ Ծննդեան
Տօնին նուիրեցի իրեն: Շատ է հարմարում իրեն եւ հա-
մապատասխանում է մազերի համար գնածս մանիչա-
կագոյն ժապաւէնին:

Իմ փերին եւ ես հիանալի յարաբերութիւն ունենք:
Ինձ ասաց, եւ հաւատում եմ, որ «երջանկութիւնը» ան-
հասանելի է ինձ համար: Բայց հիմա ես խաղաղ ու գոհ

եմ: Այլեւս նախկինի պէս չեմ խմում եւ յաճախ չեմ ըն-
կըճուում: Իմ փերին ինձ ոչինչ չի տալիս, բայց, առ-
պակասը գիտեմ ում համար եմ գրում եւ ինչու եմ գրում
այս տարօրինակ հայկա-պարսկա-ամերկեան բանաս-
տեղծութիւնները:

Լեոնարդո Ալիշան